ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-278[3]-27.05.2022-ՏՀ-011

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 140-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-րդ կետով.

«8.1) բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու կարգի սահմանումը.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին հոդվածով.

«**Հոդված 5.1. Լիազոր մարմնի լիազորությունները**

1. Լիազոր մարմինը հաստատում է՝

1) բուսասանիտարական անձնագրի ձևը և տրամադրման կարգը.

2) բուսասանիտարական հաշվառման, վերահաշվառման, հաշվառման կասեցման կարգը, հաշվառման հայտի, հաշվառման վկայականի և գրանցամատյանի ձևերը:»:

2. Լիազոր մարմինը իրականացնում է նաև այլ լիազորություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում:»:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված բուսասանիտարական անձնագրի ձևը և տրամադրման կարգը, ինչպես նաև բուսասանիտարական հաշվառման, վերահաշվառման, հաշվառման կասեցման կարգը, հաշվառման հայտի, հաշվառման վկայականի և գրանցամատյանի ձևերը հաստատվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում: